ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 50-ԱՄՅԱԿԸ

Մեր հանրապետության անդրանիկ և խոշորագույն բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի պետական համալսարանը բոլորեց իր կյանքի կեսդարյա ուղին։ Այդ փառավոր հոբելյանը լայնորեն նշվեց որպես հայ ժողովրդի գիտության և կուլտուրայի մեծ տոն։

1970 թ. դեկտեմբերի 23-ին, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճում կայացավ հանդիսավոր նիստ, որին ներկա էին աշխատավորության և մտավորականության ներկայացուցիչները արտադրության առաջավորներ, դասախոսներ, գիտնականներ, գրողներ, ուսանողներ, կուսակցական աշխատողներ։ Այստեղ էին նաև հոբելյանին մասնակցելու համար ժամանած բազմաթիվ հյուրեր՝ ինչպես Մոսկվայի, Լենինգրադի, միութենական հանրապետությունների համալսարաններից, այնպես էլ արտասահմանյան երկրներից։

Հանդիսավոր նիստը բացեց հանրապետական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը։

Նշելով, որ Երևանի պետական համալսարանի 50-ամյակը համընկավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման և Հայաստանի կոմկուսի կազմավորման կեսդարյա հոբելյանին, ընկ. Քոչինյանն ասում է. «Այս երկու փառապանծ հոբելյանների զուգադիպությունը մեծ խորհուրդ ունի։ Իր առաջին իսկ քայլերով սովետական իշխանությունն ապացուցեց, որ նա հայ ժողովրդին բերել է կայուն ու տևական խաղաղություն, ոչ միայն ապրելու ու գոյատևելու, այլև վերածնվելու, համաշխարհային քաղաքակրթության առաջին շարքերում կանգնելու անսահման հնարավորություններ։ Դրա լավագույն վկայությունն էր Երևանի պետական համալսարանի հիմնադրումը»։

Այնուհետև ընկ. Քոչինյանը ընդգծում է այն նշանակալից դերը, որ կատարել է Երևանի պետական համալսարանը ժողովրդական տնտեսության, գիտության և կուլտուրայի բազմաթիվ բնագավառների համար բարձրորակ մասնագիտական կադրեր պատրաստելու, մեր հանրապետությունում բարձրագույն ուսուցման հետագա զարգացման գործում։ «Երևանի պետական համալսարանը,—շարունակում է նա,—իր դռները լայնորեն բացել է աշխարհի տարբեր երկրներում սփռված ուսումնատենչ հայ երիտասարդների առջև։ Դա մեր երկրում լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի, սովետական բոլոր ժողովուրդների նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարության վառ ապացույցներից մեկն է։ Այսօր օրինական հպարտությամբ կարող ենք ասել, որ մեր համալսարանը հիրավի միջազգային ասպարեզ է մտնում»։

Վերջում սրտանց շնորհակալություն հայտնելով և նոր հաջողություններ մաղթելով տոնակատարությանը մասնակցող հյուրերին, նախագահողը հանդիսավոր նիստը հայտարարում է բացված։ Խանդավառությամբ պատվավոր նախագահություն է ընտրվում ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն։

ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը հրապարակեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Երևանի պետական համալսարանը Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու մասին։ Նա շքանշանն ամրացնում է համալսարանի դրոշին և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, հանրապետության Գերագույն սովետի նախագահության ու Մինիստրների սովետի անունից սրտանց շնորհավորում համալսարանականներին։

Այնուհետև ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Ռ. Հ. Մուրադյանը հրապարակում է ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի ողջույնը Երևանի պետական համալսարանին։

Զայնը տրվում է համալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանին։ Նա հանգամանորեն զեկուցում է համալսարանի կեսդարյա բեղմնավոր ուղու, ձեռք բերած խոշոր նվաճումների մասին, ընդգծում է այն խոշոր դերը, որ կատարել և այսօր էլ կատարում է հանրապետության առաջին և խոշորագույն բարձրագույն ուսումնական հաստատությունը մեր ժողովրդի հոգևոր կյանքում, համառոտակի բնութագրում է համալսարանում տարվող գիտահետազոտական բազմակողմանի աշխատանքը՝ ինչպես բնական, այնպես էլ հասարակական գիտությունների բնագավառում։

Վերջում զեկուցողը հավաստիացնում է, որ պրոֆեսորա-դասախոսական կազմը, նրա ղեկավարությունը, բոլոր աշխատակիցներն ու ուսանողությունը ամեն ինչ կանեն, որպեսզի հաջողությամբ լուծեն իրենց առջև դրված խնդիրները և հասնեն նոր նվաճումների՝ ի փառս մեր սիրելի հայրենիքի, մեր աշխատասեր ու տաղանդավոր ժողովրդի։

Հանդիսավոր նիստում Երևանի համալսարանի 50-ամյակի առթիվ ողջույնի և շնորհավորանքի խոսք ասացին՝ ՍՍՀՄ բարձրագույն և

միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրի տեղակալ Ն. Ա. Իզորովը, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը, Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պրոռեկտոր Վ. Ի. Տրոպինը, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Մ. Ն. Ռոգոլյուրովը, Թբիլիսիի համալսարանի ռեկտոր, սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Ի. Ն. Վեկուան, Ադրբեջանի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Մ. Ս. Ալիևը, Կազանի Վ. Ի. Ուլյանով-Լենինի անվան համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Շ. Տ. Հաբիբուլինը, Բելոռուսիայի Վ. Ի. Լենինի անվան պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ա. Ս. Սևչենկոն, Վիլնյուսի համալսարանի պրոֆեսոր Յո. Յու. Պալլոնիսը, Լիտվայի համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Ս. Կ. Դրաուժինը, Տարտուի համալսարանի պրոռեկտոր Յո. Կ. Տամեոոզը, Թուրքմենիայի Մ. Գորկու անվան պետական համալսարանի պրոռեկտոր Գ. Մյալիգուլիևը, Դաղստանի ԻՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ, պրոֆեսոր Ռ. Մ. Մագոմեդովը, Ռոստովի համալսարանի պրոռեկտոր Վ. Ա. Տիշչենկոն, Հյուսիսային Օսեթիայի պետական համալսարանի ՍՄԿԿ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մ. Ի. Գիոևը, Օդեսայի համալսարանի պրոռեկտոր, պրոֆեսոր Վ. Վ. Ֆաշչենկոն, Երևանի պետական համալսարանի շրջանավարտ, բելրուսահայ Շուշանիկ Մոլոյանը:

Հանդիսավոր նիստի մասնակիցները բուռն ողևորությամբ ընդունեցին ողջույնի նամակ՝ ուղղված ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և Մինիստրների սովետին:

* * *

Դեկտեմբերի 24-ին հորելյանական հանդիսությունները շարունակվեցին Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում: Այստեղ հավաքվել էին մայրաքաղաքի մտավորականության ներկայացուցիչներ, ուսումնական հաստատությունների պատվիրակություններ, հյուրեր, ուսանողներ:

Համալսարանի կուսկոմիտեի քարտուղար Հ. Բարսեղյանի բացման խոսքից հետո հանրապետության մշակույթի գործիչների անունից ողջույնի ջերմ խոսք ասաց կուլտուրայի մինիստր Կ. Ուղումյանը: Նա համալսարանին նվիրեց ժողովրդական նկարիչ Մ. Աբեղյանի «Առավոտը Ջրառատի լեռներում» կտավը:

Իր ողջույնի խոսքում Կիևի Շևչենկոյի անվան Լենինի շքանշանակիր պետական համալսարանի պատվիրակության ղեկավար, Ուկրաինական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Զուխովը ասաց. «Մենք անկեղծորեն ուրախանում ենք մեր հայ բարեկամների հաջողություններով: Պատմության, լեզվի, գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության հետազոտությունների բնագավառում ձեռք բերած նվաճումները հայտնի են հանրապետության սահմաններից շատ հեռու: Պրոֆեսոր Ա. Զուխովը Երևանի համալսարանի ռեկտոր Մ. Ներսիսյանին հանձնեց Տ. Գ. Շևչենկոյի անվան համալսարանի ողջույնի նամակը և ուկրաինական այդ բուհի հուշամեդալը:

Բրատիսլավայի Յա. Ա. Կոմենսկու անվան համալսարանի պրոռեկտոր, ՉՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Միլոշ Դոսնորսկին իր սրտաբուխ ողջույնի խոսքի վերջում հայտնեց, որ իրենց համալսարանի գիտական խորհուրդը Երևանի հոբելյար համալսարանին պարգևատրել է Յա. Ա. Կոմենսկու անվան համալսարանի ոսկե մեդալով:

Երեկոյի ժամանակ ողջույնի խոսք ասացին նաև Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Դասպարյանը, Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա. Սանջյանը, Երևանի բժշկական ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Ս. Գալստյանը, Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ռեկտոր, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ա. Թովմասյանը, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր Պ. Սեյրանյանը, բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը, համալսարանի շրջանավարտ, Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի դասախոս Գ. Անդրեասյանը, համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Ս. Հարությունյանը, համալսարանի շրջանավարտ Ս. Սիրինյանը, համալսարանի պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Ղ. Վարդապետյանը:

* * *

Երևանի պետական համալսարանը խոշոր ավանդ է ներդրել գիտության զարգացման ամենատարբեր բնագավառներում: Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, երկրաբանության, բանասիրության և գիտության այլ բնագավառներում համալսարանի գիտնականների խոշոր նվաճումները լայն ճանաչում են գտել ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս:

Համալսարանի գիտնականները վերջին տարիների հետազոտությունների արդյունքների մասին խոսվեց համալսարանի 50-ամյակին նվիրված դիտական նստաշրջանում, որը տեղի

ունեցավ դեկտեմբերի 24-ի առավոտյան։ Նստաշրջանի տարբեր բաժանմունքներում կարդացվեցին 15 զեկուցումներ։ Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի նիստը բացեց և ֆիզիկոսների ձեռք բերած հաջողությունները ներկայացրեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Դ. Սահակյանը։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Ջրբաշյանը և թղթակից-անդամ Ա. Թալալյանը նշեցին համալսարանի գիտնականների արդյունավետ աշխատանքը մաթեմատիկական գիտությունների զարգացման ասպարեզում։ Այնուհետև լսվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ն. Հարությունյանի և ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Ս. Մխիթարյանի, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Տեր-Միքայելյանի, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Պ. Բեզիրգանյանի զեկուցումները։

Քիմիական և կենսաբանական բաժանմունքի նիստում, որը բացեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Դ. Բաբայանը, լսվեցին ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Հ. Զալթիկյանի, ակադեմիկոս Մ. Տեր-Կարապետյանի, պրոֆեսոր Հ. Բատիևյանի և դոց. Ս. Մովսիսյանի, պրոֆ. Ս. Հակոբյանի զեկուցումները։

Հասարակական գիտությունների բաժանմունքի նիստը բացեց պատմության ֆակուլտետի դեկան, դոց. Հ. Պետրոսյանը։ Այնուհետև լսվեցին պրոֆ. Գ. Բռուտյանի «Փիլիսոփայական փաստարկում», պրոֆ. Էդ. Ջրբաշյանի «Գրական ժանրերի հիմնական չափանիշների մասին», դոց. Ն. Գասպարյանի «Փիլիսոփայական մտքի զարգացումը Սովետական Հայաստանում», դոց. Գ. Նալբանդյանի «Իրանական ծագում ունեցող մի քանի հայկական անձնանունների ստուգաբանությունը», պատմ. գիտ. թեկն. Ի. Ղարիբյանի «Գլաձորի համալսարանի տեղադրության հարցի շուրջը» զեկուցումները։

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ